

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22523

Գրաբիատարձակ բոլոր յեղկոմների, միացե՛ք։

ՀՐԱՀԱՆԳ
ՍՏՈՐԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ

331
Հ-99

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱՐՐ. ՅԵՎ ՄԻՋ. ԴԳ. Կ. Կ.
ՅԵՐԵՎԱՆ 1934

17.06.2013
22523

Պետրատի ապարան Ցերևան
Գլավլիտ № 557 Պատվեր № 1609 Տիրաժ 1500

15 JAN 2010
5 FEB 2007
331.
2-99
3976
33320

ԼՈՒՍԱՇԽԻ ԲՈԼՈՐ ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ, ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՔԱՂԿՈՄԻՆ, ՅԵՐԵՎԱՆԻ ՏԵՂԿՈՄՆԵՐԻՆ, ԽՄԲԿՈԼՆԵՐԻՆ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐԻՆ

Կուսակցության 17-րդ համագումարի վորոշումով պրոֆմիությունները և հանձնված մասսայական վերահսկողության աշխատանքները:

«Մասսայական վերահսկողության կազմակերպումը և ղեկավարությունը կարեվորագույն տեղ պետք է գրավեն պրոֆկազմակերպության աշխատանքում և պետք է դառնան յուրաքանչյուր գործարկոմի, յուրաքանչյուր պրոֆորգանի աշխատանքի որդանական անբաժան մասը» -(ՀԱՄԿԽ-ի նախագահության 1934 թ. հուլիսի 13-ի վորոշումից).

Ցեղնելով այս աշխատանքի խիստ կարեվորությունից, առաջարկվում է ձեզ բոլոր ստորին ողակներին կից (տեղկոմ, գյուղկոմ, խմբկոմ, լիազոր) կազմակերպել ստորին վերահսկողության բրիգադներ:

1007/33320 Ինչպես և վորտեղ է կազմակերպվում ստորին վերահսկողության բրիգադա

Ստորին վերահսկողության բրիգադան կազմակերպվում է լուսաշխի բոլոր ստորին ողակներում (տեղկոմ, գյուղկոմ, խմբկոմ,

լիազորը)։ Յուրաքանչյուր տեղկոմ, խմբկոմ կամ գյուղկոմ յելնելով իր կոլեկտիվի անդամների թվից առաջադրում է ստորին վերահսկողության բրիգադա 3–5 հոգի կազմով, իսկ լիազորություններում 1 հոգի։

Առաջադրվածները պետք է լինեն փորձված, ստուգված, արտադրությունը լավ ըմբռնող, մասնակարարման բնագավառում գոյություն ունեցող որենքներին ու խնդիրներին ծանոթ և ավելի մոտ կանգնած ընկերներ։

Ստորին վերահսկողության բրիգադան առաջադրվում է տեղկոմի, խմբկոմի, գյուղկոմի, կամ լիազորի կողմից։

Ստորին վերահսկողության բրիգադի անմիջական ղեկավարը լինում է գյուղկոմի, տեղկոմի անդամներից մեկը, իսկ լիազորություններում լիազորը։

Ստորին վերահսկողության աշխատանքների կազմակերպումը և ղեկավարությունը պետք է դառնա յուրաքանչյուր տեղկոմի, խմբկոմի, գյուղկոմի, լիազորի աշխատանքի որգանական անբաժան մասը։ Բրիգադը իրենից առանձին ինստանցիա չի ներկայացնում այլ նա հանդիսանում է ուղղակի տեղկոմի, խմբկոմի, գյուղկոմի, կամ լիազորի անմիջական գործող ապարատը և նրա աշխատանքը կազմում է տեղկոմի, խմբկոմի, գյուղկոմի կամ լիազորի ընդհանուր աշխատանքների անբաժան մասը։

Վերոհիշյալ հիմնական խնդրից յելնելով

ստորին վերահսկողության բրիգադայում աշխատանքների կազմակերպիչն ու ղեկավարը տեղկոմն է, խմբկոմն է, գյուղկոմն է ու լիազորը։

Ստորին վերահսկողության բրիգադայի աշխատանքի բովանդակությունը

1. Ժամանակին քննել ու լուծում տալ լուսաշխատավորների դիմումներին և բողոքներին։ Հայտնաբերել բյուրոկրատներին, ձգձգողներին և դեպի լուսաշխատավորների իրավունքները անհոգի վերաբերմունք ցուցաբերողներին ու խիստ պատասխանատվության յենթարկել նրանց։

2. Հայտնաբերել լուսաշխատավորների աշխատավարձի ուշացման, սխալ հաշվառումների, սխալ վճարումների, սխալ պահումներ կատարելու, ինչպես նաև աշխատանքի որենքների խախտման դեպքերը, պատճառներն ու կոնկրետ մեղավորները և միջոցներ ձեռք առնել նկատված թերությունները վերացնելու համար։

3. Սիստեմատիկ կերպով ստուգել լուսաշխատավորների մատակարարման սպասարկող բոլոր որյեկտները (փակ բաշխիչ, կոոպերատիվ, ճաշարան, մերձ քաղաքային տնտեսություն, մերձ դպրոցական տնտեսություն, պահեստ, բուֆետ և այլն)։

4. Հսկել լուսհիմնարկի բյուջեյի ռացիո-

նալ և նպատակային ոգտագործման վրա։ Ստուգել լուսաշխատավորների բնակարանային շինարարության, բժշկական ոգնության կուլտ սպասարկման և լուսաշխատավորների վորակի բարձրացման աշխատանքների դրվածքը։

5. Հսկել լուսհիմնարկների գույքի, վորպես հասարակական սեփականության պահպանման վրա։ Հայտնաբերել լուսհիմնարկի բոլոր տեսակի թերությունները և այդ թերությունները վերացնելու համար մոբիլիզացիայի յենթարկել հիմնարկի բոլոր աշխատողներին։

6. Ոգնել դպրոցներին կցված գործարանների, ՄՏԿ-ների, սովխոզների կուլտ շինարարական աշխատանքները ստուգող ստորին վերահսկողության բրիգադներին։ Վերահսկողության կարգով կազմել լուսաշխատավորներից և բանվորներից բրիգադներ և ստուգել գործարանի ու դպրոցի միջև կնքված պայմանագրերի կատարումը։

7. Խորհուրդների (գյուղխորհուրդ, քաղխորհուրդ) կուլտ շինարարական սեկցիաների մեջ գտնվող լուսաշխատավորների աշխատանքներն այնպես կազմակերպել, վոր նրանք ոժանդակեն սեկցիայի աշխատանքներին ու հսկեն կոնտակցության և կառավարության վորոշումների կատարմանը, ինչպես նաև հայտնաբերեն վորոշումները չկատարող կոնկրետ անձնավորություններին։

Թույլատրվում է բացի մշտական բրիգադներից կազմակերպել նաև ժամանակավոր բրիգադներ աշխատանքի առանձին բնագավառները ստուգելու համար (ճաշարան, խանութ, բուֆետ, բանջարանոց, պահեստ և այլն)։

Ցուրաքանչյուր տեղկոմ, խմբկոմ, գյուղկոմ և լիազոր ստորին վերահսկողության աշխատանքները այնպես պիտի կազմակերպի, վոր այդ գործում ընդգրկվեն հարվածային լավագույն լուսաշխատավորներ։ Ստորին վերահսկողության բրիգադավարների շուրջը պետք է համախմբվեն ակտիվ, գործունյա, վորակավոր կուլտ ֆրոնտի ենտուզիաստ ընկերներ, վորպեսզի նրանց միջոցով հայտնաբերեն կուլտ հիմնարկի բացերն ու թերությունները և նրանց լավագույն առաջարկությունների կիրառումով վերացնեն հայտնաբերված բացերն ու թերությունները։

Մասսայական վերահսկողության բրիգադների հիմնական նպատակն է վոչ միայն թերությունները հայտնաբերել ու արձանագրել, այլ սկսված գործը մինչև վերջը հասցնել։

«Մասսայական վերահսկողության վողջ աշխատանքը պրոֆկազմակերպությունները պետք է կազմակերպեն լայն հրապարակելու, աշխատանքի ոպերատիվությամբ, բանվորների բողոքները ու դիմումները ժամանակին քննելու և բավարարելու նկատմամբ ամենաուշադիր վերաբերմունքի հիման վրա։ Մասսայական վերահսկողության բրիգադները

պետք է վճռականորեն պայքարեն յուրաքանչյուր գործ մինչև վերջը հասցնելու. համար, ոգտագործելով բոլոր հնարավորությունները տեղում ծագող հարցերը լուծելու համար»։ (ՀԱՄԿԽ-ի նախագահության 1934 թ. հուլիսի 13-ի վորոշումից)։

Կից տպագրվում է նաև ՀԱՄԿԽ-ի նախագահության 1934 թ. հուլիսի 13-ի վորոշումը պրոֆմիությունների վերահսկիչ աշխատանքների մասին, Համկոմկուսի Կենտկոմին կից կուս.-վերահսկողության հանձնաժողովի 2-րդ պլենումի վորոշումը ընկ. ընկ. Շվերնիկի, Կոսարևի և Պոսպելովի զեկուցումների առթիվ և ընկ. Ն. Մ Շվերնիկի ճառը Լենինգրադի պրոֆխորհրդի նախագահության և պրոֆակտիվի միացյալ նիստում 1934 թ. մայիսի 17-ին։

Առաջարկվում է Ձեզ սույն վորոշումները մանրամասն ուսումնասիրել և այդ վորոշումների հիման վրա կազմակերպել ստորին վերահսկողության աշխատանքները։

Կենտավարչության նախագահ՝
Ս. ՄԱԿԻՆՑ

ՀԱՄԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 1934 Թ. ՄԱՐՏԻ 8-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ԲԳՏ-Ի ՍՏՈՐԻՆ ՈՂԱԿՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ցելնելով Համկոմկուսի 17-րդ համագումարի վորոշումներից ԲԳՏ-ի ստորին ողակների հսկողության ֆունկցիաները պրոֆմիություններին հանձնելու մասին, առաջարկել բոլոր կենտավարչություններին և ՇՊԽ-ներին 5—10 որվա ընթացքում կատարել հետևյալ միջոցառումները։

1. Գործարկոմներին կից կազմակերպել ստորին հսկողության և բանբողոքների բրիգադա ղեկավարությամբ գործարկոմի անդամներից մեկի, վորը աշխատելու է գործարկոմի ամենամյա ղեկավարության ներքո։

2. Հսկողության բրիգադի շուրջը համախմբել ցեխերի, ագրեգատների հարվածային բանվորներից կամավոր պրոֆակտիվ և նրա միջոցով կազմակերպել հսկողություն կոոպերատիվ փակ բաշխիչների, ճաշարանների, ՈՐՍ-երի, հանրակացարանների գործունեության վրա։

3. Շրջկոոպների և քաղկոոպների նկատմամբ այդ աշխատանքների պարտականությունները դնել կոոպամիության, շրջպրոֆ-

խորհուրդների և քաղպրոֆխորհուրդների վրա:

4. Հսկողության բրիգադների կողմից տեղերում չլուծված հարցերը փոխադրել գործարկոմների միջոցով համապատասխան կենտրոնական վերջնական լուծում տալու համար:

5. Պարտավորեցնել հսկողության բրիգադներին և գործարկոմներին կոնտակտ աշխատանք տանել գուգահեռականության ենթակա խուսափելու համար ԼԿՑԵՄ տեղական կազմակերպությունների (թերթ և հեծելազորային ջոկատների) հետ և վերջինների կողմից հայտնաբերված թերությունների վերացման համար ընթացք տալ հսկողության բրիգադների միջոցով:

Հսկողության բրիգադների պարտականությունների մեջ մտնում են

ա) Պայքար բյուրոկրատիզմի և քաշքշուկների դեմ:

բ) Պայքար յուրացումների, վատնումների դեմ և պետդույքի անձեռնմխելիության համար:

գ) Կուսակցության, կառավարության և պրոֆմիության բարձրագույն որգանների վորոշումների ճիշտ և ժամանակին կատարման հսկողություն:

դ) Բանրողոքների և դիմումների քննարկումը, լուծումը, նրանց ընթացք տալը և նրանց շտապ լուծման տալը:

ՀԱՄԽ-ի Քարտուղար՝ ՏԱՆԻՆ

ԸՆԿ. Ն. Մ. ՇՎԵՐՆԻԿԻ ՃԱՌԸ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊՐՈՖ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊՐՈՖ ԱԿՏԻՎԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԻՍՏՈՒՄ՝ 1934 Թ. ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ

Ընկերներ. 10 որվա ընթացքում յես մի բրիգադի հետ միասին ուսումնասիրեցի բանվորների մասսայական վերահսկողության աշխատանքը Լենինգրադի յերկու գործարաններում՝ «Կարմիր Պուտիլովեց» և «Կրասնայա Զարյա» գործարաններում:

Սկզբից հենց պետք է նշել, վոր այդ յերկու գործարաններում կան վորոշ նվաճումներ, և նրանց փորձը կարելի յե ոգտագործել մյուս գործարաններում:

Բանվորների մասսայական վերահսկողության կազմակերպման աշխատանքն այս յերկու ձեռնարկություններում կարողացել են շաղկապել ստորին պրոֆ-որգանների վողջ կազմակերպչական վերակառուցման հետ, առանց սպասելու վերեվի հատուկ հրահանգների և դիրեկտիվների:

Ուսումնասիրելով մասսայական վերահսկողության փորձն այդ յերկու ձեռնարկություններում, պետք է նշել, վոր բանվորների հիմնական ուշադրությունը կենտրոնացված է յեղել այն հարցերի վրա, վորոնք ամենից ավելի կարեվոր են հանդիսանում: Յուրաքան-

չյուր ձեռնարկություն ունի իր հատուկ «հիվանդությունները» և այդ հիվանդություններն առաջին հերթին անդրադառնում են վերահսկողության աշխատանքում:

Վորո՞նք են այդ հարցերը:

Առաջին հերթին բանջարանոցների, խանութների, ճաշարանների, բնակարանների շինարարության, բնակելի շենքի և նյութական կենցաղային ու արտադրական ամենաբազմազան հարցերը:

Պուտիլովի գործարանում հիմնական աշխատանքը կատարում է բանվորների հին գվարդիան, վորոնցից յուրաքանչյուրը մի քանի տասնյակ տարվա արտադրական ստաժ ունի: Նրանք ուշադիր կերպով վերաբերվում են իրենց աշխատանքին յուրաքանչյուր բնագավառում, վորտեղ նրանց նշանակել է գործարկոմը:

Այս գործարաններում բնորոշ է այն, վոր վերահսկողության աշխատանքին ակտիվ մասնակցում են տնային տնտեսուհիները և բանվորների կանայք: Նրանց հասարակական աշխատանքը չի բավականանում միմիայն վերահսկողությամբ, նրանք կազմակերպված աշխատանք են կատարում նաև բանջարանոցներում: Նրանք պայմանագրեր են կնքել և հաջողությամբ լրացնում են բանջարանոցներում ղեկավարող բանուժի պակասը:

Բանվոր վերահսկիչների դերը

Ուզում եմ մի քիչ մանրամասն կանգ առնել առանձին վերահսկիչների վրա: Ահա՛, որինակ՝ ընկ. ԲԱՑԿՈՎԸ: Նա 71 տարեկան է. 56 տարի աշխատում է արտադրության մեջ: Նա մեխանիկական 4-րդ արհեստանոցի ճաշարանային հանձնաժողովի նախագահն է: Նա մի ժամ առաջ է աշխատանքի գալիս, մտնում է ճաշարանը և ստուգում, թե ինչպիսի մթերքներ են բերել, ինչպիսին է նրանց վորակը և ինչպես են նրանցից ճաշ պատրաստում:

Ընկ. Բայկովը սիրով է վերաբերվում իր գործին: Նա իսկական, բոլորից հարգված հասարակական վերահսկիչ է. նրա բոլոր ցուցմունքներն անմիջապես կատարվում են: Ցեվ նա զգալի հաջողություններ է ձեռք բերել ճաշարանում:

Մի ուրիշ վերահսկիչ՝ ընկ. ՑՎԵՏԿՈՎԸ: Նա փականագործ է, աշխատանքի հերոս, 54 տարվա արտադրական ստաժ ունի: Նա նույնպես ճաշարանային հանձնաժողովի բրիգադիր է: Նա վոչ թե խրճանագրություններ է կազմում, այլ անմիջական ոպերատիվ ներդործությամբ վերացնում է թերությունները տեղն ու տեղը:

Ընկ. ԲՈՒԴԵՐ: Լավագույն հարվածային: Նա գործարանային առևտրական ձեռնարկությունների հասարակական տեսուչն է: Նա

կատարում է գործոն աշխատանք և ձգտում է տեղն ու տեղը վերացնել թերությունները:

Ցեռ կարող էր այստեղ այդպիսի ընկերների բազմաթիվ որինակներ բերել: Ցերկու գործարաններում էլ վերահսկողության աշխատանքն առավելապես ընթանում է խանութների, քաղաքամերձ տնտեսությունների և նման այլ աշխատանքների դծով:

Ընկերներ: Մասսայական վերահսկողության մասնակիցներից բացի, ո՞վ կարող է նման «մանրուքներով» զբաղվել: Ի հարկե, հազիվ թե վորևէ մեկը կարողանա վերացնել այդ «մանրուքները», իսկ հաճախ, այդ մանրուքները վիժեցնում են խանութների աշխատանքը և բանվոր սպառողի նորմալ սպասարկումը:

Մասսայական վերահսկողության կազմակերպումը յուրաքանչյուր պրոֆորգանի կարևորագույն խնդիրն է

«Կրասնայա Զարյա» գործարանում մասսայական վերահսկիչները մեծ աշխատանք են կատարում բանվորների բողոքներին ընթացք տալու ուղղությամբ: Մի բանվորուհի այնպիսի բնակարանումն եր ապրում, վորտեղ յերկու անդամ դող եր մտել: Նա բողոքեց միլիցիային, բայց միլիցիան վոչ մի միջոցի չձեռնարկեց: Այն ժամանակ նա դիմեց մասսայական վերահսկողության բրիգադին: Բրիգադը տեղում ծանոթանալով իրերի դրությանը, միլիցիայի պետի առաջ հարց դրեց վճռական միջոցների դիմելու: Արդյունքն այն յեղավ, վոր այդ տանն ապրող մի ռեցիդիվիստ բնակարանից վտարվեց:

Նույն գործարանում մի բանվորուհի վորոշեց իր ամուսնուց բաժանվել:

Բայց բնակարանային միությունը հայտարարում է, թե հարկավոր է Զադսից վկայական բերել ամուսնացած լինելու մասին: Իսկ այնտեղ էլ պահանջում են, վորպեսզի բնակարանային միությունը տեղեկանք տա: Բանվորական վերահսկողության աշխատանքի շնորհիվ միայն հաջողվեց հաղթահարել այդ բյուրոկրատիզմը:

Այստեղից դուք տեսնում եք, ընկերներ, թե ինչպիսի բազմազան հարցեր են դրվում պրոֆմիությունների առաջ, և յեթե պրոֆմիությունը չկարողանա արագ և ճիշտ լուծում տալ այդ հարցերին, այն ժամանակ բանվորները կասեն— «Եվ մեր ինչի՞ն է պետք պրոֆմիությունը, վորը հարկ յեղած ժամանակ չի կարողանում ոգնել»:

Բանդյուղտեսչության ստորին որգանների ֆունկցիաները պրոֆմիություններին հանձնելու մասին 17-րդ կուսհամագումարի վորոշումը նոր, հզոր զենք տվեց պրոֆմիություններին՝ պայքարելու բանվորների նյութական և կենցաղային սպասարկման բարձրացման համար:

Հետևաբար բանվորների մասսայական վերահսկողության հարցը, նրա կազմակերպումն ու ղեկավարությունը յուրաքանչյուր ցեխային պրոֆկազմակերպչի և գործարանային կոմիտեյի կարևորագույն խնդիրն է հանդիսանում: Այնուամենայնիվ տակավին չկա այն մասսայականությունը, որը պահանջվում է այդ գործում: Հարկավոր է ձգտել այնպիսի դրության, որ մեր գործարաններում լինեն ոչ թե տասնյակ և հարյուրավոր ենթուղիաստներ, այլ հազարավոր ակտիվ բանվոր վերահսկիչներ:

Գործարանում վերահսկողության կազմակերպիչը գործարկոմի նախագահն է, ցեխում ցեխ պրոֆկազմակերպիչը կամ ցեխկոմի նախագահը:

Ցես ուզում եմ մի քանի խոսք ասել, բանվորների մասսայական վերահսկողության կազմակերպչական կառուցվածքի ձևերի մասին:

Ներկայումս մենք այդպիսի բազմաթիվ ձևեր ունենք: Մի շարք ձեռնարկություններում ստեղծված են վերահսկողության բյուրոներ, մյուսներում՝ խմբակներ: Բայց հաճախ նրանք փոխարինում են գործարկոմներին, ցեխկոմներին և պրոֆկազմակերպիչներին: Ստացվում է այն, որ բանվորների սպասարկման կարևորագույն հարցերը լուծվում են գործարկոմից դուրս: Ուստի պետք է վերացնել հատուկ հանձնաժողովներն ու բյուրոները և վերահսկողության ամբողջ ղեկավարությունը դնել գործարկոմի նախագահի վրա, իսկ ցեխում ցեխային կոմիտեյի կամ պրոֆկազմակերպչի վրա:

Ինչո՞ւ է այդ անհրաժեշտ: Վորովհետև գործարկոմի նախագահը պետք է լինի բանվորների մասսայական վերահսկողության կազմակերպիչը: Նա պիտի իրազեկ լինի բանվորների բոլոր բողոքներին և կարողանա ժամանակին վերացնել այդ խայտառակությունները: Եվ այն ժամանակ մասսայական վերահսկողության ղեկավարությունը կլինի կոնկրետ, իսկ արդյունքներն իրական:

Այստեղ ընկերները կասեն, թե եվ նոր ֆունկցիա է դրվում գործարկոմի նախագահի վրա: Ցես կարծում եմ, որ աշխատանքային ժամանակը ճիշտ կազմակերպելու դեպքում գործարկոմի նախագահներն այս ֆունկցիան ևս կարող են կատարել:

Այժմ պատասխանատվության հարցը: Ցենթադրենք թե բանմատակարարը չի նախապատրաստվել ցանքսի կամպանիային: Ի՞նչ եք կարծում, բրիգադը պե՞տք է պատասխանատու լինի այս կամպանիայի համար: Վո՛չ: Պատասխանատու է գործարկոմը և առաջին հերթին գործարկոմի նախագահը: Ուստի նա այնպես պետք է կազմակերպի աշխատանքը, որ կարողանա իր վրա վերցնել մասսայական վերահսկողության գործի անմիջական ղեկավարությունը և ծագում,—

100%
33320

ինչպես գործարկոմի նախագահը կկարողանա կազմակերպել մասսայական վերահսկողության գործը: Ամենից առաջ պրոֆակտիվի միջոցով, ցեխային պրոֆկազմակերպիչների, ցեխային կոմիտեների միջոցով:

Ցեխում վերահսկողության հարցերով պետք է զբաղվի ցեխկոմի նախագահը կամ ցեխ. պրոֆկազմակերպիչը: Այնինչ մենք ներկայումս ունենք այնպիսի դրություն, որ ցեխպրոֆկազմակերպիչը հաճախ չի խառնվում բանվորների բողոքը լուծելու գործին: Հարկավոր է գործն այնպես դնել, որ մասսայական վերահսկողության կազմակերպիչ ուժը լինի ցեխային պրոֆկազմակերպիչը կամ ցեխկոմի նախագահը, և այն ժամանակ բանվորը կգգա, որ միայն պրոֆ-որգանների գծով կարելի է լուծել բոլոր հարցերը: Ցեխկազմակերպիչը կամ ցեխկոմի նախագահը պետք է ակտիվ մասնակցություն ունենա բանվորական վերահսկողության աշխատանքին, բայց դա ամենևին չի նշանակում, թե նա պետք է լուծի բոլոր հարցերը: Նա պետք է ունենա կազմակերպված ակտիվ և նրա միջոցով ստուգի բողոքները, աշխատի լուծել բոլոր այն հարցերը, որոնցով նրան դիմում են բանվորները:

Առանձին կազմակերպչական հարցերի մասին

Մասսայական վերահսկողության բրիգադների աշխատանքի պրակտիկայում այժմ

արդեն ծագում են մի շարք հարցեր: Խոսում են, որինակ, այն մասին, թե ինչպես պետք է վարվել առևտրական-մատակարարման խորհրդակցությունների հետ: Այժմ հարկավո՞ր են արդյոք այդպիսի խորհրդակցություններ: Անպայման հարկավոր են: Դրանք պետք է պահպանել, որպեսզի բանվորական հասարակայնությունը կարողանա մասնակցել մատակարարման և հասարակական սննդի կազմակերպման գործին:

Այստեղ մասսայական վերահսկողության ակտիվիստները կկարողանան ծանոթանալ բանվորական մատակարարման որգանների գործունեությանը և դրանով նախապատրաստվել վերահսկողության աշխատանքի խոշացրած ձևերին: Իսկ այդ խորհրդակցությունների ղեկավարությունը պետք է դնել գործարկոմի վրա:

Շատ են խոսում այն մասին, թե ինչպիսի բրիգադներ ստեղծել,—մշտակա՞ն, թե ժամանակավոր: Ժամանակավոր բրիգադների կողմնակիցներն այսպես են պատճառաբանում, —յեթե բանվոր վերահսկիչները շարունակ գործ ունենան միևնույն խանութի, միևնույն ճաշարանի հետ, ապա կարող է պատահել, որ վերահսկողության գործը միաձուլվի այդ աշխատանքի հետ: Այդպիսի դեպքեր յեղել են և լինում են: Բայց բանվորական հասարակայնությունը կկարողանա յերեվան բերել և աշխատանքից հանել անպետք վերահսկիչներին,

բարոյապես վոչնչացնել նրանց, վորպես բանվորական գործի դավաճանների: Առանձին խեղաթյուրումները, սակայն, չեն կարող լուրջ պատճառաբանություն հանդիսանալ մշտական բրիգադների դեմ: Ընդհակառակը, այդպիսի բրիգադների կազմակերպումն ամբողջապես կարգադրացնի իրեն: Վերահսկելու համար հարկավոր է անպայման ուսումնասիրել գործը: Միևնույն մարդիկ կկարողանան ավելի խորապես կատարել այդ:

Ի հարկե, մշտական բրիգադների ստեղծումը չի կարող բացառել ժամանակավոր բրիգադների կազմակերպումը: Մասսայական վերահսկողության գործում հարկավոր է ոգտագործել բոլոր մեթոդները: Ինչքան շատ ակտիվիստներ ներգրավվեն վերահսկողության գործում, այնքան շատ արդյունք կստացվի:

Հատուկ բյուրոներ և հանձնաժողովներ ունենալու դեպքում մասսայական վերահսկողության աշխատանքի պլանը չեն մտցնում գործարկոմի աշխատանքի ընդհանուր պլանում, իսկ այդ նշանակում է, վոր գործարկոմը հարկ չեղածին պես չի զբաղվում վերահսկողության հարցերով:

Մասսայական վերահսկողության աշխատանքի պլանը, պետք է գործարկոմի աշխատանքի պլանի հիմնական մասը կազմի:

Մի քանի խոսք աշխատանքի պլանի մասին: Այդ պլանը պետք է պարունակի միմիայն հիմնական հարցերը: Որինակ՝ այժմ անհրաժեշտ է պլանի մեջ մտցնել փայտամթերման հարցը, պետք է ստուգել, թե վորտեղ է մթերված փայտը, ինչպես են այն փոխադրում, չկա՞ն արդյոք այնպիսի մարդիկ, վորոնք ձգձգում են այդ գործը: Կարևոր հարց է նաև քաղաքամերձ անտեսությունների բանուժի հարցը: Այդպիսի հարցեր պետք է անպայման անդրադառնան պլանում: Հիմնական հարցերի այդպիսի պլան ունենալով, գործարկոմները և ցեխպրոֆկազմակերպիչները, ի հարկե, չեն կարող չզբաղվել բանվորական կենցաղի ամենորյա «մանրուքներով»:

Ստուգել խորապես, կատարել ոպերատիվ և գործոն աշխատանք

Մի քանի խոսք աշխատանքի մեթոդների մասին: Պետք է ասել, վոր մասսայական վերահսկողության գործը նոր-նոր է՝ սկսվում, ուստի բանվորները հիմնական ուշադրությունը դարձնում են հիմնական հարցերին: Բայց այժմ մենք պետք է ավելի խորապես մոտենանք վերահսկողության աշխատանքին: Ցեսձեզ մի փաստ կբերեմ, և դուք կհասկանաք, թե ինչո՞ւ է այդ հարկավոր:

Բանմատրաժնի հարվածային գրքույկներն ստուգող բրիգադը «Կրասնայա Զարյա» գործարանում պարզեց, վոր այդ գործը շատ անմխիթար դրության մեջ է գտնվում: Ցերբ մենք զբաղվեցինք այս հարցով, ապա պարզ-

վեց, վոր առաջին յեռամսյակի պլանը կատարված է ընդամենը 39 տոկոսով:

«Կարմիր Պուտիլովեց» գործարանում այժմ արդեն սկսել են խորացված աշխատանք կատարել ստուգման ուղղությամբ:

Գործարկումը կազմակերպել է բնակարանային-տնտեսական բաժնի հետազոտման գործը: Բանվորական ավանի ընթացիկ վերանորոգումն ստուգող բրիգադն արդեն վերջացրել է իր աշխատանքը և յերևան է բերել մի շարք խայտառակություններ:

Այդ գալիս է ապացուցելու, վոր բանվորների մասսայական վերահսկողությունը կկարողանա շատ բան անել այն խայտառակությունների վերացման ուղղությամբ, վորոնք կատարվում են մեր տնտեսվարների քթի տակ և հաճախ անպատիժ են մնում: Բայց այդպիսի փաստերի հայտնաբերումը հնարավոր է միմիայն խորացված ստուգման միջոցով:

Այժմ հարկավոր է ուշադրություն դարձնել վերահսկիչներին սովորեցնելու գործի վրա, դրա համար գործարկումներին կից ստեղծելով հատուկ խմբակներ:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուժեղացնելու բանվորների մասսայական վերահսկողության ոպերատիվ աշխատանքը:

Մեզ հարկավոր է այնպիսի վերահսկողություն, վոր մենք վոչ միայն լուսանկարենք այն, ինչ գոյություն ունի, այլ տեղն ու տեղը

միջոցներ ձեռք առնենք խայտառակությունները վերացնելու համար:

Այդպիսին է բանվորների մասսայական վերահսկողության աշխատանքի հիմնական սկզբունքը: Մեզ հարկավոր են բանվորների իրավունքների պաշտպանությունն ապահովող գործողություններ, մեզ հարկավոր չեն «թղթային արձանագրություններ», վորոնցով միայն լուսանկարում են այդ խայտառակությունները:

Եթե մասսայական վերահսկողությունը լինի մարտական, գործոն, այն ժամանակ նրա հեղինակությունն ել բարձր կլինի: Արձանագրությունները հարկավոր են միայն ծայրահեղ դեպքում, վորպես դրությունը բնութագրող վաստաթղթեր և վորպես հիմունք մեղավորներին պատասխանատվության յենթարկելու համար: Իսկ բանվորական վերահսկողության հիմնական կանոնն այն է,— մեկ անգամ ել եմ կրկնում,— վոր մենք տեղն ու տեղը վերացնենք թերությունները:

Իրավունքներ կան, կարողացեք ոգտագործել դրանք

Շատ ընկերներ հարց են տալիս— ի՞նչ իրավունքներ ունեն բանվոր-վերահսկիչները:

Սրան յես պետք է պատասխանեմ, վոր Խորհրդային Միությունում պրոֆ-միություններն ունեն կոոպերատիվ, խորհրդային, տըն-

տեսական որդանների և նրանց ձեռնարկությունների աշխատանքն ստուգելու բոլոր իրավունքները: 17-րդ կուս. համագումարի վորոշումով մեզ հանձնված են բանդյուղտեսչության ստորին որդանների ֆունկցիաները և իրավունքները: Ել ի՞նչ իրավունքներ են հարկավոր ձեզ:

Գործեցե՛ք,—ահա՛ ձեզ իրավունքները: Գործեցեք այնպես, վորպեսզի զգան, վոր դուք պայքարում եք բանվոր դասակարգի գործի համար և հաջողությամբ կատարում եք 17-րդ կուսհամագումարի վորոշումները: Այնինչ մեր գործարկոմների աշխատողներից շատերը վախենում են, թե հանկարծ վորևե բան դուրս չգա: Առայժմ մենք չունենք պրոլետարական առողջ խիղախություն, անհաշտվողականություն՝ խայտառակությունների հանդեպ: Դրա համար ել իրավունքներ չկան: Իրավունքները տրվում են վոչ թե հրահանգներով, այլ կենդանի գործերով: Պետք է կարողանալ ոգտագործել դրանք և ամեն մի սկսված գործը հասցնել մինչև վերջը: Մեր կոդմն և Խորհրդային Միության ամբողջ որենսդրությունը:

Պետք է աշխատել նաև, վերահսկողության գործում հարցերը բան չափով հրապարակվեն: Եթե այդպես չանենք, բանվորը չի իմանա վերահսկողության աշխատանքների մասին, չի դիմի նրան: Դրա համար հարկավոր է ոգտագործել պատի թերթերը, յուրաքանչյուր ցեխում դրվող հատուկ տախտակները, վորոնց ոգնությամբ ցեխկոմը կամ ցեխպրոֆկազմակերպիչը բանվորներին իրազեկ կը-դարձնեն նրանց բողոքների արդյունքի մասին:

Կազմակերպել բանվորական առաջարկների իրացման վերահսկողությունը

Մի քանի խոսք արտադրական հարցերի մասին:

Ցավ զգում եմ, ընկերներ, վոր բանվորական առաջարկների իրացման գործը մեզ մոտ այնքան ել բարեհաջող չէ:

Հարկավոր է, վորպեսզի արտադրական խորհրդակցությունների միջոցով բանվորները կարողանան արագորեն արմատացնել իրենց առաջարկները: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բրիգադում արտադրական խորհրդակցությունների կատարած աշխատանքներին, այդպիսի խորհրդակցություն ունենալով ամսական 4-5 անգամ: Չի կարելի թույլ տալ, վոր արտադրական խորհրդակցությունները փոխարինվեն ընդհանուր ժողովներով: Արտադրական խորհրդակցությունները պետք է քննեն արտադրական հարցերը, արդ. ֆինպլանի համար պայքարելու հարցերը, աշխատանքի արտադրողականության, սոցմրցման ու հարվածայնության կազմակերպման հարցերը, մանավանդ բանվորական առաջարկների և գյուտերի արմատացման հարցերը: Եթե մենք այժմ նայելու լինենք արտադրական խորհրդ-

գակցությունների արձանագրությունները, ապա բանվորական առաջարկների կամ նրանց հետ կապված հարցերի մասին քիչ բան կը-գտնենք այնտեղ:

Պետք է այս գործն ուղղել և աշխատել, որ պայքարը բանվորական առաջարկների իրացման համար արտադրական խորհրդակցությունների հիմնական գործը դառնա: Պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել նաև բանվորական առաջարկների հաշվառմանը: Առհասարակ պետք է նորոգել բանվորական առաջարկների հաշվառման սիստեմը, պետք է այնպես անել, որ ցեխկոմի նախագահը, ցեխպրոֆկազմակերպիչը կարողանա առաջ չարժել բանվորական առաջարկները և պայքարել նրանց իրացման համար: Առանց առաջարկները հաշվի առնելու, նրանց մասին չուտով կմոռանան, իսկ բանվորներն այլևս չեն գնա արտադրական խորհրդակցությունները, որովհետև չեն տեսնի նրանց արդյունքները:

Երկու խոսք պարգևատրման մասին: Պարգևատրման ֆոնդերը մեզ մոտ հաճախ չեն ոգտագործվում: Պետք է այդ ֆոնդերն ոգտագործել խրախուսելու համար այն հարվածայիններին, ռացիոնալիզատորներին և դյուտարարներին, որոնք մարտականորեն պայքարում են աշխատանքի լավագույն կազմակերպման և արդիականացման համար:

***

Մեր այս երկու գործարանների գործարկոմների աշխատանքը բանվորական մասսայական վերահսկողության գծով՝ ցույց է տալիս, որ 17-րդ կուսհամագումարի որոշումից հետո պրոֆմիությունները սկսել են տիրապետել բանդյուղտեսչության ստորին որդանների ֆունկցիաներին: Մենք ունենք արդեն աշխատանքի մի ամբողջ շարք որինակներ, որոնք կարելի է ոգտագործել այլ վայրերում: Աշխատանքի յեն ներգրավված վոչ միայն բանդյուղտեսչությանն աջակցող խմբերի հիմնական կադրերը, այլև նոր բանվորներ: Բանվոր վերահսկիչների ուշադրությունն ուղղվում է ամենից ավելի հուզող հարցերի վրա: Կարճ ասած, մենք բարձրացել ենք բանվորների մասսայական վերահսկողության կազմակերպման առաջին աստիճանը, բայց մենք դեռ շատ աշխատանք ունենք կատարելու:

Այս առնչությամբ յես ուզում եմ մի յերկու խոսք ասել պրոֆմիությունների միջին ողակների ղեկավարման մասին:

Ցերը յես յեղա Պուտիլովի գործարանում, «Կրասնայա Զարյա»-ում, փորձեցի պարզել, թե հաճախ են լինում արդյոք այնպիսի դեպքեր, յերբ մարզային կոմիտեյի նախագահը 4–5 որով գալիս է նայելու գործարկոմի, ցեխպրոֆ կազմակերպիչի և խմբ-

բակային պրոֆ. կազմակերպչի աշխատանքը։ Բանից դուրս է գալիս, որ այդպիսի դեպքեր շատ տակավ են լինում։ Դրա փոխարեն շրջաբերականներ ինչքան ուզեք։ Ցեսը գտնում եմ, որ սա մեծ թերություն է և որ հարկավոր է այդ վերացնել ամեն գնով։ Ժամանակն է վերջ տալ ողնության վերաբերյալ խոսակցություններին։ Ժամանակն է պրոֆմիությունների միջին ողակների ղեկավար կազմի աշխատանքը այնպես կազմակերպել, որ նա իր ժամանակի մեծ մասն անցկացնի ձեռնարկություններում։ Դա հատկապես պահանջվում է այժմ, բանվորների մասսայական վերահսկողության կազմակերպչական վերակառուցման շրջանում։

Ավելի շա՛տ գործողություն և ոպերատիվ ոգնություն գործարկումներին դրանումն է միջին ողակների հիմնական խնդիրը, և յեթե մենք հարկ յեղածին պես, մարտականորեն իրագործենք այդ, ապա կապահովենք 17-րդ կուսհամագումարի կողմից գործարկումների վրա դրված նոր ֆունկցիաների արագ յուրացումը։

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՇԿԿԶ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿԽ-ի նախագահության 1934 թ. հուլիսի 13-ի վորոշումը

Կուսակցության 17-րդ համագումարի վորոշումով պրոֆմիություններին է հանձնված մասսայական վերահսկողությունը, վորը բանվորների լայն մասսաներին պրոլետարական պետության կառավարման գործում ներգրավելու կարևորագույն ձևը և աշխատավորության բարեկեցության հետագա լավացման համար պրոֆմիությունների մղած պայքարի հզոր ղենքն է հանդիսանում։

Կուսակցության 17-րդ համագումարի, Համ Կ (բ) Կ Կենտկոմին կից Կուսվերահսկողության Հանձնաժողովի 2-րդ պլենումի վորոշումները և մասսայական վերահսկողության մասին պլենումում ընկ. Կագանովիչի տված ցուցումներն արագորեն կատարելու նպատակով, ՀԱՄԿԽ-ի նախագահությունը վորոշում է.

1. Մասսայական վերահսկողության կազմակերպումն ու ղեկավարությունը կարևորագույն տեղ պետք է դրավեն պրոֆկազմակերպության աշխատանքում և պետք է դառ-

նան յուրաքանչյուր գործարկոմի, յուրաքանչյուր պրոֆորգանի աշխատանքի որոշնական անբաժան մասը:

2. «Պրոֆմիությունների գործնական վերահսկողական աշխատանքը առաջին հերթին պետք է ուղղված լինի դեպի այն բնագավառները, վորտեղ պահվում են նյութական արժեքներ բանվորների ու աշխատավորների մատակարարման համար, այն է՝ բանմատրաժինները, փակ բաշխիչ կոոպերատիվները և պահեստները, պետք է ուղղված լինի դեպի ամենաաջողք պայքարը հափշտակումների, խաբելու, թերակշռելու, թերաչափելու և նմանն այլ յերեվույթների դեմ (Համ Կ (բ) Կ Կենտկոմին կից Կուսվերահսկողության Հանձնաժողովի յերկրորդ պլենումի վորոշումներից:

Այս նպատակով գործարկոմը մասսայական վերահսկողության միջոցով պետք է շարունակ ստուգի.—

ա) Կշռաքարերի քաշը, կշեռքների ճշտությունը, մետրերի չափը, գների կալկուլացիան, ապրանքների և մթերքների պահպանումը.

բ) Մանակցի պահեստներում, խանութներում ամսական մնացորդները դուրս բերելու գործին, վերլուծի ապրանքների ինչպես պակասելու, այնպես ել ավելանալու պատճառները.

գ) Մասսայական վերահսկողության

բրիգադների անդամների մշտական հերթապահությունն սահմանի խանութներում, փակ բաշխիչներում, բանմատրաժիններում՝ բանվորների բողոքները տեղում - քննելու, ապրանքների վաճառման ճշտության, սահմանված գների ճշտության, խանութի սանիտարական դրության վերահսկելու և հերթերի դեմ պայքարելու համար:

3. Խանութների ստուգմանը զուգընթաց, գործարկոմների ուշադրության կենտրոնում պետք է լինեն... (բաց է թողնված) բանջրանոցները, կաթնատնտեսական ֆերմաները, փակ բաշխիչները, բանմատրաժինները:

Առաջիկա շրջանի համար գործարանտեղկոմների հերթական խնդիրը հիմարել ստուգել քաղաքամերձ տնտեսությունների, քաղհանի և բերքահավաքի նախապատրաստման ընթացքը (բանուժի, տրանսպորտի, բանջրանոցի պահեստների և վերամշակման միջոցների բավարար քանակը), կաթնատնտեսական ֆերմաների պատրաստականությունը ձմռան շրջանին, կերերով ապահովված լինելը, ձմեռային շենքերի վիճակը, արտադրանքի պատրաստումը, նրա ոգտագործումը, փոխադրությունը և այլն:

Ստուգել փակ բաշխիչների, բանմատրաժինների միջոցառումները յուրաքանչյուր ձեռնարկությունում՝ բանվորներին և ծառայողներին ձմեռվա համար բանջարեղենով

(կարտոֆիլ, կաղամբ, վարունգ, պամիդոր և այլն) ապահովելու ուղղությամբ:

4. Գործարկոմները մասսայական վերահսկողության բրիգադների միջոցով պետք է սիստեմատիկ կերպով ստուգեն ճաշարանների, խոհանոց-գործարանների աշխատանքը, արտադրանքների վորակը, նրանց պահպանումը, սահմանված նորմայով կերակուր պատրաստելը, վերահսկեն ճաշի հետ տրվող հացի բաժինների քաշը: Ցերեկվա և գիշերվա հերթափոխությունների ճաշարանային բրիգադների մշտական հերթապահություն սահմանել ճաշ պատրաստելու և ճաշի ժամանակ կերակուրի վորակի վրա վերահսկելու, սանիտարական դրությանը հսկելու, ճաշի գնները ստուգելու, տեղում բանվորների բողոքները քննելու, հերթերը վերացնելու և սպառողների սպասարկումը բարելավելու համար:

5. «Զբավականանալով սոսկ ազդանշումով»՝ գործար-տեղկոմները պետք է տեղն ու տեղը ձգտեն վերացնել թերությունները և չարարկումները: «Ցեթե հարցերը չզարգացնան պրոֆմիութենական սիստեմի գծով (գործարկոմ, միությունների մարզկոմ, կենտկոմ, միջմիութենական որգաններ), անհրաժեշտ է այդ հարցերը դնել Կուսվերահսկողության Հանձնաժողովի առաջ» (Համ Կ (բ) Կ Կենտկոմին կից Կուսվերահսկողության Հանձնաժողովի 2-րդ պլենումի վորոշումից):

Մասսայական վերահսկողության կարևորագույն խնդիրն է հանդիսանում վոչ միայն հանցագործությունները ու չարարկումները բաց անել և մեղավորներին պատասխանատվության կանչել, այլև ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնք կանխեն մթերքների ու ապրանքների հափշտակումներն ու փչացումները և այլ տեսակի չարարկումները:

6. Փակ բաշխիչների վերաստուգիչ հանձնաժողովներին ղեկավարելու գործը դնել գործարկոմների վրա, իսկ շրջպատկոմների և քաղկոմների վերաստուգիչ հանձնաժողովներինը՝ համապատասխան պրոֆխորհրդների վրա:

Գործար-տեղկոմների և պրոֆխորհուրդների նախագահները պարբերաբար հրավիրում են վերստուգիչ հանձնաժողովների նիստեր, նրանց հրահանգներ են տալիս, ծանոթացնում են մասսայական վերահսկողության բրիգադների նյութերի հետ, ոգնում են վերաստուգումը կազմակերպելու և վերստուգիչ հանձնաժողովների վորոշումները կատարելու գործում:

7. Առաջարկել միությունների կենտկոմներին, հատկապես արդյունաբերական միությունների կենտկոմներին և գործար-տեղկոմներին, ուշի ուշով ընտրել չեֆբրիգադների անդամներին և սոցհամատեղիչներին, հասարակական աշխատանքում աչքի ընկած լավագույն բանվորներից և հարվածայիններից գործնական ոգնություն ապահովել նրանց

նկատմամբ և գործարար պայմաններ ստեղծել հիմնարկություններում աշխատելու համար, այդպիսով սոցհամատեղիչներից կազմել պատրաստելով պետական և տնտեսական ապարատների համար:

8. Վերահսկիչ աշխատանքի համար գործար-տեղկոմները և ցեխային պրոֆկազմակերպիչները ստեղծում են մշտական ու ժամանակավոր բրիգադներ ըստ աշխատանքի օբյեկտների (ճաշարաններ, բուֆետներ, խանութներ, բանջարանոցներ և այլն): Բրիգադներին ընտրում է ցեխպրոֆկազմակերպիչը լավագույն բանվորներից, ծառայողներից, ճարտարապետ-տեխնիկական աշխատողներից ու հարվածայիններից, իսկ նրանց հաստատում է գործար-տեղկոմը: Ցեխային բրիգադները, որպես կանոն, պետք է վերահսկողություն ունենան այն խանութների, ճաշարանների, խոհանոցների, բանջարանոցների վրա, որոնք սպասարկում են գերազանցապես տվյալ ցեխի բանվորներին: Մասսայական վերահսկողության աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը և բրիգադներին գործնական ոգնություն ցույց տալու աշխատանքը դնել գործար-տեղկոմների նախագահների վրա և նախազգուշացնել, որ «նրանք պատասխանատու կլինեն, եթե նրանց գոնմատրաժնում կամ կոոպերատիվում հափշտակումներ, վատնումներ և սպառողին խաբելու յերեվույթներ են տեղի ունենում»

(Կուսվերահսկողության Հանձնաժողովի պլենումի վորոշումից):

Մասսայական վերահսկողության բյուրոները, վոր ստեղծել են մի քանի գործարտեղկոմներ, վերացնել, իբրև գործարկոմին փոխարինող ավելորդ որգան:

9. Մատակարարման և կոոպերացիայի ստորին որգանների աշխատանքի ավելի վորակյալ ստուգումն ապահովելու նպատակով, պարտավորեցնել գործար-տեղկոմներին մասսայական վերահսկողության բրիգադների կազմում ներգրավելու, հաշվապահներին, ինչպես նաև ձեռնարկություններում խմբակներ և սեմինարներ կազմակերպել մասսայական վերահսկողության մասնակից բանվորներին, հատկապես բրիգադների ղեկավարներին սովորեցնելու համար հաշվապահության, գների կալկուլյացիայի վերաբերյալ տարրական գիտելիքները, որպեսզի նրանք գիտենան հնարավոր չարաշահումների կանալները («չորանալով պակասել», «հոսելով պակասել», «թերակշռում» «թերաչափում» և այլն):

10. Առաջարկել գործարկոմներին բարելավել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը աշխատավարձի և արտադրության մասին կուսակցության և կառավարության դիրեկտիվները մասսայական ստուգման յենթարկելու ուղղությամբ, վճռականորեն պայքարելով բանվորներին պակաս փող տալու, աշխատավարձը ժամանակին չը-

վճարելու և բանվորական առաջարկները չկատարելու դեպքերի դեմ:

11. Հոլիս և ոգոստոս ամիսների ընթացքում անցկացնել ցածր վարձատրվող բանվորների աշխատավարձի բարձրացման մասին Համ Կ (բ) Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի ընդունած վորոշումների կատարման մասսայական ստուգում:

12. Մասսայական վերահսկողության վողջ աշխատանքը պրոֆկազմակերպությունները պետք է կազմակերպեն լայն հրապարակելու, աշխատանքի ոպերատիվության, բանվորների բողոքներն ու դիմումները ժամանակին քննելու և բավարարելու նկատմամբ ամենաուշադիր վերաբերմունքի հիման վրա: Մասսայական վերահսկողության բրիգադները պետք է վճռականորեն պայքարեն յուրաքանչյուր գործ մինչև վերջը հասցնելու համար, ոգտագործելով բոլոր հնարավորությունները տեղում ծագող հարցերը լուծելու համար:

Կապ պահպանելով Կուսակցական և Խորհրդային Վերահսկողության հանձնաժողովների և նրանց տեղական լիազորների հետ, գործարկոմները պարտավոր են վերադաս միութենական և միջմիութենական որգանները փոխադրել այն հարցերը, վորոնք չեն կարող լուծվել տեղում, և Կուս. վերահսկողության հանձնաժողովի միջոցով ընթացք տալ այն հարցերին, վորոնք չեն կարող լուծել պրոֆմիությունները:

ՀՍՄԿՄ-ի նախագահությունը պարտավորեցնում է բոլոր միությունների կենտկոմներին և պրոֆխորհուրդներին՝ ուշի ուշով ուսումնասիրել ու ընդհանրացնել մասսայական վերահսկողության բրիգադների նյութերը և նրանց աշխատանքի փորձի հիման վրա կառավարական որգանների առաջ դնել պետական ապարատի և բանվորական մատակարարման որգանների աշխատանքի առանձին բնագավառների կարգավորման վերաբերյալ հարցերը:

13. Կուսակցության 17-րդ համագումարի և Կուսվերահսկողության Հանձնաժողովի վորոշումների իրացման գործում գործարտեղկոմներին ոգնություն ցույց տալու համար պարտավորեցնել բոլոր միությունների կենտկոմներին՝ նրանց նախագահների անձնական պատասխանատվությամբ, տեղերը գործուղել միությունների կենտկոմների նախագահության անդամների և պատասխանատու աշխատողների խմբեր: Ձեռնարկություններում մընալու ժամկետ սահմանել առնվազն 15 որ:

Պարտավորեցնել բոլոր պրոֆկազմակերպություններին և բոլոր գործուղվածներին լայնորեն ոգտագործել տեղական առանձնահատկություններն ու գործարանային մամուլը՝ մասսայական վերահսկողության աշխատանքը լուսաբանելու համար, ցույց տալով վերահսկիչների հայտնաբերած կոնկրետ փաս-

տերը, չարարկումների հեղինակները և ձեռք առնված միջոցները:

Պարտավորեցնել «Տրուդ» թերթի խմբագրությանը և վողջ պրոֆմամուլին լայնորեն լուսաբանել պրոֆկազմակերպությունների աշխատանքը մասսայական վերահսկողության բնագավառում և միությունների ԿԿ-ների ու ՀԱՄԿԽ-ի աշխատողների տեղերում կիրառած միջոցառումները:

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ԿՈՒՍՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԿ. ԸՆԿ. ՇՎԵՐՆԻԿԻ. ԿՈՍԱՐԵՎԻ ՅԵՎ ՊՈՍՊԵԼՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Կուսվերահսկողության հանձնաժողովի պլենումն արձանագրում է, որ մինչև վերջին ժամանակներս պրոֆմիությունները թույլ են ծավալել մասսայական ստուգողական, վերահսկողական աշխատանքը, թեև ՀԱՄԿԽ-ի և մի քանի միությունների կենտկոմների առաջին իսկ շրջաբերությունները ձեռնարկություններում ցույց են տալիս, թե ինչպիսի լուրջ հնարավորություններ կան այս ասպարեզում:

Կոմյերիմիության կազմակերպությունները ավելի յեռանդով սկսեցին իրենց աշխատանքը «թերթ հեծելազորի» մասին կուսակցության վորոշումները կատարելու ուղղությամբ և արդեն կուտակել են առաջին փորձը:

Առաջարկել ՀԱՄԿԽ-ի և միությունների կենտկոմների կուսխմբակներին, ինչպես նաև կոմյերիմիության կենտկոմին, հաշվի առնել կուսվերահսկողության հանձնաժողովի պլենումում յեղած մտքերի փոխանակությունը և մասսայական վերահսկողության յեռանդուն աշխատանք ծավալել ամենորյա

կրպ պահպանելով կուսվերահսկողության հանձնաժողովի հետ, և առաջադրել իրենց յեղբակացություններն ու առաջարկները համապատասխան կուսակցական և խորհրդային կազմակերպությունների միջոցով:

2.

Պրոֆմիությունների գործնական վերահսկողական աշխատանքն առաջին հերթին պետք է ուղղված լինի դեպի այն բնագավառները, վորտեղ նյութական արժեքներ են պահվում բանվորների և աշխատավորների մատակարարման համար (բանմատաքաժիններ, փակ բաշխիչ կոոպերատիվներ, պահեստներ) դեպի անողոք պայքարը հափշտակումների, զեղծարարությունների, խարեության, թերակշռման, և թերաչափման դեմ և այլն: Ստորին վերահսկիչ որգանների ֆունկցիաների կատարումը պետք է ամենից աչքի ընկնող տեղ գրավի պրոֆմիությունների ամբողջ աշխատանքում, պետք է որգանապես ձուլվի գործարկոմների ամբողջ աշխատանքի հետ և վոչ թե փոխարինվի վերահսկողության հատուկ բյուրոներով, խորհրդակցություններ կազմակերպելով և այլն: Նախազգուշացնել գործարկոմների նախագահներին, վոր նրանք պատասխանատու կլինեն յեթե նրանց բանմատաքաժնում կամ կոոպերատիվում լինեն հափշտակումներ, զեղծարարություններ սպառողին խաբելու դեպքեր:

Մատակարարման և կոոպերացիայի ստորին որգանների աշխատանքի ամենորյա ստուգումը պետք է ավելի վորակավոր դառնա: Պրոֆմիությունների այն աշխատողները, վորոնք իրագործում են վերահսկողությունը, պետք է կարողանան գլուխ հանել հաշվապահական հաշվետվությունից— դների վերլուծությունից և կալկուլացիայից, գիտենան հնարավոր չարարկումների կանալները («հոսելով պակասելը», «չորանալով պակասելը», թերակշռումը, թերաչափումը և այլն): Զբաղվա կանանալով պարզ «ազդանշումով» գործարտեղկոմները պետք է տեղն ու տեղը աշխատեն վերացնել թերությունները ու չարարկումները: Յեթե հարցերն իրենց լուծումը չեն գտնում պրոֆմիութենական սիստեմի գծով (գործարկոմ, միությունների մարզկոմ և կենտկոմ, միջմիութենական որգաններ) անհրաժեշտ է դրանք դնել կուսվերահսկողության հանձնաժողովի առաջ:

ՀԱՄԿՄ-ը և միությունների կենտկոմները պետք է ստուգեն նաև արտադրության և աշխատավարձի հարցերի վերաբերյալ կուսակցության և կառավարության դիրեկտիվների կատարումը (ստուգել ցածր վարձատրություն ստացող բանվորների աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ ՀԱՄԿ(բ)Կ կենտկոմի և ԽՍՀՄ ԺողկոմԽորհի վորոշումների

կատարումը, ստուգել բանվորական առաջարկների իրացումը և այլն)։

Պրոֆմիությունների ամբողջ աշխատանքը մասսայական վերահսկողության դծով, ինչպես և թեթև հեծելազորի աշխատանքը, և հատկապես այդ աշխատանքի արդյունքները պետք է լայնորեն լուսաբանվեն մամուլի և առաջին հերթին գործարանային թերթերի էջերում։

3.

Հավանություն տալ ՀԱՄ ԼԿՑԵՄ կենտկոմի այն միջոցառումներին, որոնք նպատակ ունեն վերականգնել «թեթև հեծելազորի» գործնական աշխատանքը, և այդ հարցի առթիվ ՀԱՄ ԼԿՑԵՄ կենտկոմի պլենումի ընդունած որոշումները։

Առաջարկել ՀԱՄ ԼԿՑԵՄ կենտկոմին հատուկ ուշադրություն դարձնել «թեթև հեծելազորի» և կադրերի ընտրության վրա, ընտրել կոմյերիտմիության ամենից ավելի ստուգված, կուլտուրական, գրագետ և ակտիվ աշխատողներ։ Աշխատանքը «թեթև հեծելազորում» կոմյերիտականի համար հանդիսանում է պատվի գործ ու կուսակցության և կոմյերիտմիության վիթխարի վստահության արտահայտությունը։

Առաջարկել ՀԱՄ ԼԿՑԵՄ կենտկոմին «թեթև հեծելազորի» աշխատանքում թույլ

չտալ աղմկարարություն և սենսացիայի հետևից վազելն այլ կոմյերիտական վերահսկիչներից պահանջել հարցի լուրջ ուսումնասիրություն։

«Թեթև հեծելազորի» ակտիվը պետք է դիտենա, որ մատակարարման և կոոպերացիայի որգանները խցկված դասակարգայնորեն թշնամի տարրերի մնացորդները հաճախ գիտակցորեն խառնում են հաշվեսվությունը, վորպեսզի թաղցնեն իրենց դողունի մեքենայությունները։ Ուստի անհրաժեշտ է տիրապետել հաշվապահական հաշվեսվության և առևտրի տեխնիկային հափշտակողներին և գողերին մինչև վերջը ջախջախելու համար։

4.

«Թեթև հեծելազորի» և պրոֆմիությունների մասսայական վերահսկողության կարևորագույն պատգամն է կարողանալ սկսած գործը մինչև վերջը հասցնել։ Կուսվերահսկողության հանձնաժողովը բացառիկ կարևոր նշանակություն է տալիս միլիոնավոր աշխատավորների կարիքներն ու շահերը շոշափող բոլոր նյութական–կենցաղային հարցերի, աշխատավորների բողոքների հանդեպ վոչ հոտառու, բյուրոկրատական վերաբերմունքի փաստերի ճիշտ լուծմանը։ Վերահսկիչները պետք է ամենայն վճռականությամբ տեղում պայքարեն աշխատավորների բողոքներն ու դիմում-

ները ժամանակին քննելու և բավարարելու համար հենց պայքարեն տեղն ու տեղը և վոչ թե մարդիկ ուղարկեն Պողոսից Կիրակոսի մոտ, վոչ թե բողոքներն ու դիմումները մեխանիկորեն ուղարկեն համապատասխան ինստանցիաները, նախորոք չոգտագործելով դրանք տեղերում լուծելու բոլոր հնարավորությունները:

Կուս. վերահսկողության հանձնաժողովի պլենումը նախազգուշացնում է այն վտանգից, վոր բյուրոկրատիզմի դեմ ուղղված իսկական բոլշևիկյան պայքարը փոխարինում են գրասենյակային գրագրությամբ, բողոքներն ավտոմատ կերպով վերադաս ինստանցիաներն ուղարկվելու մեթոդներով, փոխանակ տեղում հայտնաբերելու չարիքի կոնկրետ մեղավորներին, նրանց անարդանքի սյունին գամելու:

5.

Վողջ մասսայական վերահսկողության աշխատանքում ամենավիթխարի դերը պետք է խաղա մեր մամուլը— ցեխային պատի թերթերից և գործարանային բազմատիրաժներից մինչև մարզային ու կենտրոնական թերթերը: Հենվելով միլիոնավոր բանթղթակիցների և դյուղթղթակիցների հետ սերտ կապ պահպանելու վրա, թերթերը շատ ավելի յեռանդով պետք է պայքարեն զանազան թերությունները և խայտառակությունները բաց անելու և վերացնելու համար, ընդունված հարցերը մինչև վերջը հասցնելու համար:

Կենտրոնական–ժողկոմատային թերթերի խմբագիրները պետք է նկատի ունենան, վոր ժողկոմատների որդանները հանդիսանալով, նրանք պատասխանատու յեն կուսակցության առաջ և չեն կարող թերթի եջերում թույլ տալ «դերատեսչական մեթոդը», «իրենց» ժողկոմատի թերությունները լռության մատնելու մեթոդը և այլն: Կենտրոնական ժողկոմատային թերթերը պետք է վճռականորեն ուժեղացնեն իրենց մասնակցությունը վերահսկողության աշխատանքին, ոգնեն կուսակցական և խորհրդային վերահսկողության հանձնաժողովներին բաց անելու թերությունները և պայքարելու նրանց վերացնելու համար:

6.

Վերահսկողության և կատարման ստուգման գործը կարևորագույն մարտական խնդիր է հանդիսանում, վորը հատկապես ընդգծեց ընկ. Ստալինը: «Կարելի յե վստահությամբ ասել, վոր մեր թերությունների և ճեղքվածքների ինստասերորդական մասը բացատրվում է կատարման ճիշտ կազմակերպված ստուգման բացակայությամբ. Տարակույս լինել չի կարող, վոր կատարման այդպիսի ստուգման առկայության դեպքում ճեղք-

վածքներն ու թերությունները անպայման կվերացվեն» (ՍՏԱԼԻՆ)։

Կուս. վերահսկողության հանձնաժողովի պլենումը վստահ է, որ պրոֆմիությունների, կոմյերիտմիության և մամուլի բոլոր առաջավոր, ակտիվ աշխատողները հարկ չեղածին պես, գործնականորեն կլծվեն մասսայական վերահսկողության և կուսակցության ու կառավարության դիրեկտիվների կատարման ստուգման աշխատանքին և կկանգնեն այն մեծ խնդիրների մակարդակի վրա, որը դրին 17-րդ համագումարը և ընկ. ՍՏԱԼԻՆԸ։

Պետ. Հրատ. Գրադարան
Ս. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0197266

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.